

Յաճախ կոչուած է նաեւ Հին Կտակարանէն փոխ առեալ բառերով. զոր օրինակ պատարագ¹, իբրեւ նուէր առ Աստուած, ինչպէս կը համարուէր այլոց եւ մանաւանդ աղքատաց եղած այդ բարիքը²: Ասկից յօրինուած են բացատրութիւնքս, ընդունելութիւն պատարագի, կամ ընդունելութեան կոչունք պատարագաց (Մանդ. 59), կամ հաց պատարագի (Սահ. 97. Աշտ. ԻԳ): — Կայ դարձեալ զնկունն³, իբր նասուն մորթել այլոց համար, ուսկից եւ պատարագ զնկման (Գոշ՝ Առկ. 109): — Անգամ մ՛ըսուած է նաեւ ողջակեզ, միշտ նոյն ազրիւրէն⁴, բայց անճիշտ իմաստով. զի մեր մէջ կիզումն չկար նուիրեալ նասնոց, ինչպէս Հրեայք կ՛ընէին:

Վերջապէս հին ժամանակ ազուպ ալ կը կոչուէր⁵, յն. ἀγάπηէն՝ որ է սէր, ողորմութիւն, եւ սոյն հացկերութից սեպհական կոչումն ընդհանուր բրիստոնէական եկեղեցւոյ մէջ: Մեր քով միջին դարուն արդէն ընկած սովորութենէ, հին գրոց

1. Մանդ. 59. Փրպ. 430, '79. Սահ. 113, '14, '30. Զն. 48. Արժ. 329. Ընդհ. 160. ՀԿՏ. Ժ. հմմտ. Ղ. Եւս. Ա, 2. Գ. Թագ. Ը, 64:

2. Մանդ. 58. Տար. Թէոփ. 282. Ընդհ. 156:

3. Մանդ. 58, 62. Օճն. 25. Ընդհ. 154. ՀԿՏ. Ժ:

4. Զն. 48. Ղ. Եւս. Ա, 3-14 եւն:

5. Սահ. 112. Աշտ. ԻԳ. Օճն. 25: